Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 22

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

23.08.2024թ. **ք. Երևան**

Հիմք ընդունելով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2021 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 20-Լ հրամանով հաստատված «Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգ»-ի պահանջները և ղեկավարվելով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2022 թվականի հուլիսի 08-ի թիվ 15-Լ հրամանով սահմանված Հավելված 1-ով նախատեսված՝ «Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ»-ով, Հավելված 3-ով նախատեսված՝ «Ինքնավար պաշտոնների թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջներ»-ով, Հավելված 4-ով նախատեսված՝ «Հարցազրույցի փուլի ընթացքում գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավոր»-ով և Հավելված 6-ով նախատեսված՝ «Գնահատման և միավորների հաշվարկման կարգով, անցողիկ միավորներ»-ով, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովը հետևյալ կազմով՝ նախագահ Մուշեղ Բաբայանի, անդամներ Արշալույս Մինասյանի, Գարեգին Բեգոյանի, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ 2024 թվականի օգոստոսի 23-ին՝ ժամը 10:00-ից անցկացվեց Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրելու համար 2024 թվականի մայիսի 23-ին հայտարարված մրցույթի հարցազրույցի (բարեվարքության) փուլը:

Մրցութային հանձնաժողովի անդամներ Նաիրա Ճնգրյանն և Ռուզաննա Ավագիմյանն ամենամյա արձակուրդում գտնվելու և Հայաստանի Հանրապետությունից բացակայելու պատճառով չեն մասնակցել հարցազրույցի (բարեվարքության) փուլին: Հանձնաժողովը վերջիններիս բացակայությունը դիտարկել է հարգելի:

Հարցազրույցի (բարեվարքության) փուլին որպես դիտորդ ներկա է գտնվել «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Աննա Մելիքյանը և Հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով որպես հոգեբան ներգրավված Մարինե Սահակյանը:

Մրցույթին մասնակցած ինքնավար պաշտոնների 3 թեկնածուները հաղթահարել են հարցազրույցի (բարեվարքության) փուլի անցողիկ շեմը՝ 35 միավորը (որից առնվազն 22 միավորը բարեվարքության համար):

Թեկնածուների հարցազրույցի (բարեվարքության) փուլում ներկայացվող պահանջների գնահատման վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են կից ամփոփաթերթում.

23.08.2024թ.

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Հ/Հ	Թեկնածու	Հանձնաժողով	Բարեվարքության թվաբանական ընդհանուր միջին միավոր	Թվաբանական ընդհանուր միջին միավոր
1	**Եղիազարյան Աննա Սամվելի**			
Հանձնաժողովի նախագահ		Մուշեղ Բաբայան	24,33	39
անդամներ		Արշալույս Մինասյան		
		Գարեգին Բեգոյան		
2	**Հայրապետյան Արաքսյա Մասիսի**			
Հանձնաժողովի նախագահ		Մուշեղ Բաբայան	24	38,67
անդամներ		Արշալույս Մինասյան		
		Գարեգին Բեգոյան		
3	**Ղահրամանյան Լիանա Վաղարշակի**			
Հանձնաժողովի նախագահ		Մուշեղ Բաբայան	23,67	37,67
անդամներ		Արշալույս Մինասյան		
		Գարեգին Բեգոյան		

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ **Մ. Բաբայան**

անդամներ՝ **Ա. Մինասյան**

Գ. Բեգոյան
/Հանձնաժողովի քարտուղար/